Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

Դպրոց՝ Գեղարքունիքի մարզի Ն. Գետաշենի Ա. Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց

Թեմա՝ Մոտիվացիան որպես ուսուցման կարևորագույն մաս

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Մեղրակյան

Ուսուցիչ՝ Իվետա Մարկոսյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Գլուխ1.Ինչ է մոտիվացիան: Մոտիվացիայի կարևորությունը ----------4

Գլուխ 2.Մոտիվացիայի կարևորությունը մանկավարժության մեջ----------10

Գլուխ 3.Հետազոտական մաս, արդյունքների վերլուծություն----------13

Եզրակացություն----------18

Գրականության ցանկ—----------20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթական և ճանաչողական մոտիվացիան դպրոցականների համար սովորելու ակտիվ մոտեցումն է, լավ սովորելու ցանկության իրականացումը: Որպեսզի երեխան ունենա ուժեղ ներքին մոտիվացիա՝ ես ուզում եմ լավ սովորել, անհրաժեշտ է, որ յուրաքանչյուրն ինքն իրեն ասի. «Ես կարող եմ դա անել: Ես կհասցնեմ այն>>:

Մոտիվացիան ցանկացած անհատի գործունեության կարևոր բաղադրիչն է: Լատիներենից այս եզրույթը, որը հանդիպում է բազմաթիվ գիտական ոլորտներում, թարգմանվում է այսպես՝ ես շարժվում եմ: Այսինքն՝ մոտիվացիա նշանակում է դրդապատճառ, շարժառիթ (գործողություն):

Աշակերտների մոտիվացիան հաջող ուսուցման հիմնական պայմանն է:

Մոտիվացիան մարդու ներքին հոգեբանական բնութագիրն է, որն արտահայտվում է արտաքին դրսևորումներով, անձի նկատմամբ շրջապատող աշխարհի, գործունեության տարբեր տեսակների առնչությամբ:

Ուսուցման հաջողության բանալին կայուն կրթական մոտիվացիայի և ճանաչողական գործունեության առկայությունն է: Ուսուցիչը պետք է ունենա կյանք հաստատող սկիզբ, ուրախություն և հաջողություն:

Սովորողների մոտիվացիայի բարձրացման գործում շատ մեծ է ուսուցչի դերը: Նա պետք է կարողանա երեխային տալ այնպիսի առաջադրանքներ, որոնք կլինեն հասկանալի, հետաքրքիր և ընդունելի սովորողի կողմից, ճիշտ ուղղորդել նրան: Ըստ հոգեբանների գիտելիքների յուրացման համար ուսուցիչը պետք է կարողանա բարձրացնել սովորողի ներքին մոտիվացիան, քանի որ այն որոշիչ է կրթական գործընթացում: Այսպիսով, ուսուցումը պետք է կազմակերպվի երեխաների հետաքրքրության սահմաններում, դրանով ավելացնելով նրանց ոգևորությունը և հետաքրքրությունը դեպի դասը:

Ուսուցիչը պետք է անընդհատ դրական հուզական մթնոլորտ պահպանի դասարանում: Դրա համար անհրաժեշտ է ամրապնդել աշակերտի վստահությունը իրենց ունակությունների նկատմամբ,նվազեցնել սթրեսի բացասական ազդեցությունը:

Հետազոտության նպատակն է՝ կենսաբանության դասապրոցեսի ժամանակ բարձրացնել ուսումնական գործընթացի մոտիվացիան, որը կբերի ուսուցման որակի բարելավմանը, կառաջացնի սեր և հետաքրքրություն կենսաբանության նկատմամբ:

Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրել եմ հետևյալ խնդիրները.

Ուսումնասիրել մոտիվացիան որպես ուսումնական գործընթացի կարևորագույն մաս:

Ուսումնական պրոցեսի ժամանակ օգտագործել և կիրառել մոտիվացիոն խաղեր, մեթոդներ և ֆիլմեր:

Մշակել կենսաբանության մեջ մոտիվացիան բարելավելու ռազմավարություն:

Գլուխ 1. Ինչ է մոտիվացիան: Մոտիվացիայի կարևորությունը

Կան մոտիվացման բազմաթիվ տեսություններ: Այս մոտեցումները կենտրոնանում են մարդկային պահանջների վրա, ինչը ձևավորում է նրանց վարքագիծը, և թե ինչպես կարող են կառավարիչները ստեղծել պայմաններ, որպեսզի բավարարեն աշխատողներին:

Մոտիվացիան առաջացել է լատիներեն movere բառից: Տերմինն առաջին անգամ օգտագործել է Ա. Շոպենհաուերը իր «Բավարար պատճառի չորս սկզբունքներ» հոդվածում: Խոսել անձի գործունեության մոտիվացիայի մասին՝ նշանակում է պարզել,թե որոնք են գործունեության դրդապատճառները,նպատակներն ու դրանց տեսակները:

Մարդկային վարքի մոտիվացիայի խնդիրը գիտնականներին միշտ է հետաքրքրել: Բազմաթիվ հին փիլիսոփաների աշխատություններում կարող ենք հանդիպել մոտիվացիայի վերաբերյալ տեսությունների: Հոգեբանության մեջ մոտիվը մարդու արարքների դրդապատճառն է: Մարդու գործունեության սկզբնական դրդապատճառը նրա նյութական և հոգևոր կարիքները բավարարելու ցանկությունն է:

Մոտիվացիան գործունեության առաջացման գործընթաց է ,որն իրագործվում է զանազան դրդապատճառների (մոտիվների) առկայության շնորհիվ: Մարդը ձգտում է ձեռք բերել որևէ առարկա,դիրք,վիճակ և այլն կարճ ասած նպատակ , որի համար կազմակերպում է որոշակի դրդապատճառների կողմից հարուցվող և անհրաժեշտ ժամանակահատվածում պահպանվող գործունեություն: Այստեղ մեր խնդիրն է ծանոթանալ գործունեություն առաջ բերող հոգեկան ուժերին: Բայց ամենից առաջ պետք է պարզել,թե ինչպիսին է դրդապատճառների և պահանջմունքի հարաբերությունը: Այս հարցի պատասխանն իմանալն անհրաժեշտ է , քանի որ նույնիսկ մասնագիտական գրականության մեջ հաճախ պահանջմունքն ու դրդապատճառը նույնացվում են :

Մոտիվացիայի գործընթացային տեսություն

Մոտիվացիայի գործընթացային տեսության ուղղություններն են՝ ակնկալումների, արդարության և Պորտեր-Լոուերի մոդելը:

Ակնկալումների տեսություն. այս տեսությունը առանձնահատուկ տեղ է տալիս մոտիվացիայի 3 գործոններին.

Աշխատանքի ծախսումներ- արդյունք, համաձայն սրա մարդը կարող է ակնկալել, որ եթե գործադրի լրացուցիչ ջանքեր, ապա կհասնի իր ակնկալած արդյունքներին:

Արդյունքների հետ կապված ակնկալում-խրախուսում,սա նշանակում է, որ եթե անհատը հասնում է իր ակնկալած արդյունքներին ստանում է համապատասխան խրախուսում և պարգևատրումներ:

Ենթադրվող հարաբերական բավարարվածություն կամ անբավարարվածություն, եթե խրախուսումը ցածր է, այսինքն՝ ստացված պարգևատրման արժեքը մարդու համար մեծ չէ, ապա առավել ակտիվ աշխատելու մոտիվացիան կթուլանա։

Արդարության տեսության, համաձայն այս տեսության՝ մարդիկ սուբյեկտիվորեն են մոտենում վարձատրությանը, խրախուսմանը՝ իրենց գործադրած ջանքերին համապատասխան և համեմատում այն այլ աշխատողներին տրվածի հետ։ Եթե համեմատության արդյունքում անհատը ճշտում, պարզում է իր համար, որ առկա է անարդար մոտեցում, այսինքն նկատում է, որ գործընկերը նույն աշխատանքի դիմաց ստացել է ավելի բարձր խրախուսման միավոր, ապա նրա մեջ առաջանում է հոգեբանական լարվածություն և նվազում է մոտիվացիան։

Պորտեր-Լոուերի մոդել։ Լայման Պորտերի և Էդվարդ Լոուերի մշակած մոտիվացիայի մոդելը ներառում է ակնկալումներ և արդարության տեսությունների տարրեր։ Այս մոդելի համաձայն, արդյունքը, որոնց հասել են աշխատակիցները, կախված են երեք գործոններից՝ջանքերից, կարողություններից և աշխատանքի դերի գնահատականից։ Ջանքերի կիրառման աստիճանը որոշվում է խրախուսման, պարգևատրման արժեքով և վստահության աստիճանով։ Մոդելում ներառվում է նաև պարգևատրման և արդյունքների փոխհարաբերությունը։

1.1 Մոտիվացիայի ձևերը

Մոտիվացիան կոչվում է դրական, դրական խթաններով պայմանավորված, իսկ բացասականի վրա հիմնվածը՝ բացասական։ Կայուն է համարվում այն մոտիվացիան, որը հիմնված է մարդու պահանջմունքների վրա, քանի որ այն լրացուցիչ ամրապնդում չի պահանջում։ Հետևաբար, անկայուն է այն մոտիվացիան, որը պահանջում է լրացուցիչ ամրապնդում։ Ուսումնական մոտիվացիան ուղղորդում և աջակցում է ուսումնական գործունեության իրականացմանը։ Այս մոտիվացիան իրենից ներկայացնում է բարդ համակարգ, որը ձևավորվում է շարժառիթների, նպատակների, անհաջողության արձագանքների, հաստատակամության և սովորողների տեղորոշման համար։ Մոտիվները ձևավորվում են սովորողի բնավորության առանձնահատկություններով։ Սովորողի ուսումնական մոտիվացիան կարող է տարբեր լինել, կախված տարիքից և տրամադրությունից։ Դրա համար էլ

գոյություն ունի մոտիվացիայի երեք մակարդակ՝ բարձր, միջին և ցածր։

Մարդկային վարքագծի գրեթե բոլոր ասպեկտներում մոտիվացիան շատ մեծ դերակատարություն ունի։ Ցանկացած որոշում կայացնելիս մենք առաջնորդվում ենք մոտիվացիոն ներքին մղումներով։

Հոգեբանները, խոսելով մոտիվացայի մասին, նշում են, որ դա ներքին վիճակ է, ցանկություն, որն ակտիվացնում է վարքագիծը և ուղղորդում դեպի նպատակը։ Այլ կերպ ասած՝ մոտիվացիան կարիքների և ցանկությունների ազդեցությամբ թելադրվող

վարքագիծն է: Մարդկային վարքագծի գրեթե բոլոր ասպեկտներում մոտիվացիան շատ մեծ դերակատարություն ունի: Ցանկացած որոշում կայացնելիս մենք առաջնորդվում ենք մոտիվացիոն ներքին մղումներով:

Մոտիվացիայի ձևերը՝



1.2 Մարդու մոտիվացիայի և դրդապատճառների ուսումնասիրություն

Մարդու մոտիվացիայի գործընթացների ուսումնասիրությունը, ըստ էության, անհատականության ուսումնասիրությունն է նրա գործունեության մեջ: Մարդու գործունեության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն միշտ նպատակային է: Նպատակներ դնելու կարողությունը մարդու՝ որպես բանական էակի, հիմնարար հատկանիշներից է:

Արտահայտելով գիտակցության ակտիվ կողմը և հաճախ որոշելով մարդու գործողությունների մեթոդն ու բնույթը, նպատակը, որը մարդը դնում է իր համար, ինտեգրում է վարքի կարգավորիչ գործընթացների բարդ կառուցվածքը մեկ ամբողջության մեջ, որոշում է, որ մարդը կատարում է այդ արարքը, ոչ թ մեկ այլ:

Հոգեբանները մշակել են մարդու մոտիվացիայի և դրդապատճառների ուսումնասիրության մի քանի մոտեցում՝ փորձ, դիտարկում, զրույց, հարցում, հարցաքննություն, գործունեության արտադրանքի վերլուծություն։

Այս բոլոր մեթոդները կարելի է բաժանել երեք խմբի՝

1. Սուբյեկտի կամ այն ձևով իրականացվող հարցաքննություն
2. Վարքագծի և դրա պատճառների գնահատումը դրսից(դիտարկման մեթոդ)։
3. Փորձարարական մեթոդներ։

Հաջողության հասնելու մոտիվացված մարդիկ սովորաբար իրենց գործունեության մեջ որոշակի դրական նպատակներ են դնում, որի ձեռքբերումը միանշանակ կարելի է համարել հաջողություն։

Նրանք ակնհայտորեն ցանկություն են ցուցաբերում իրենց գործունեության մեջ անպայման հասնել միայն հաջողության, փնտրում են նման գործունեություն, ակտիվորեն ներգրավված են դրանում, ընտրում են միջոցներ և նախընտրում են նպատակին հասցնել գործողությունները։ Նրանց բնորոշ է իրենց բոլոր ռեսուրսների լիարժեք մոբիլիզացումը և նպատակին հասնելու վրա կենտրոնացվածությունը։

Դեռահասների մոտիվացիայի վրա մեծ ազդեցություն են թողնում նաև արտաքին գործոնները, որոնցից են՝ սիրահարվածությունը, հասակակիցների կամ ուսուցիչների հետ կոնֆլիկտները։

Հաճախ հետաքրքրությունը սիրելի առարկայի նկատմամբ անհետանում է անհայտ պատճառով և դեռահասը չգիտի, թե ինչ է ուզում կյանքից և չունի կոնկրետ նպատակներ։

Ըստ հոգեբանների գիտելիքի յուրացման համար ուսուցիչները պետք է կարողանան բարձրացնեն դեռահասի ներքին մոտիվացիան, քանի որ այն որոշիչ է կրթական գործընթացում։

Ուսուցումը պետք է կազմակերպվի աշակերտի հետաքրքրության սահմաններում, որի հետևանքով սովորողի մոտ կավելանա հետաքրքրությունը դեպի դասը։

Գոյություն ունի մոտիվացիայի երեք մակարդակ՝ բարձր միջին և ցածր։



Հետազոտությունները ցույց են տվել, որ դպրոցում և դասարանում տիրող մթնոլորտը նպաստում է ուսման դրական մոտիվացիայի ձևավորմանը: Շատ կարևոր է ուսուցի-աշակերտ համագործակցության փոխհարաբերությունները: Ուսուցման ընթացքում ուսումնական նյութի մատուցման ձևը, խրախուսման կիրառումը, հետաքրքիր փորձերը նպաստում են ուսման դրական մոտիվացիայի ձևավորմանը:

Դպրոցում դրական կրթական ուսումնական մոտիվացիա ստեղծելու համար մեծ է ուսումնական հաստատության դերը, ուսուցչի արտահայտիչ խոսքը, դասարանում տիրող առողջ մթնոլորտ, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները: Սովորողի մոտ մոտիվացիայի ձևավորման մեջ մեծ է նաև ուսուցիչների և ծնողների դերը , որոնք պետք է հաշվի առնեն հետևյալ բաղադրիչները՝



Այսպիսով, անձի որոշակի գործունեությամբ պայմանավորված, որի գործունեության հիմքում ընկած են մի քանի շարժառիթներ, պահանջմունքներ, կարիքներ, ուղղորդում են անձի վարքը: Գոյություն ունեն մոտիվացիայի վերաբերյալ շատ ուրիշ այլ աշխատություններ, տեսություններ, հայեցակարգեր, որոնք անդրադարձել են անձի մոտիվացիոն ոլորտի առանձնահատկություններին ինչպես աշխատանքային, այնպես էլ ուսումնական գործունեության մեջ: Կախված գործունեության ոլորտից, բնույթից, անձի մոտիվացիան կարող է տարբեր լինել, քանի որ գործունեության տարբեր ոլորտներին համապատասխան գոյություն ունեն մոտիվացիայի տարբեր տեսակներ, որոնք ուղղորդում են անձին՝ կատարելու այս կամ այն ուղղվածության գործունեությունը:

Գլուխ 2.Մոտիվացիայի կարևորությունը մանկավարժության մեջ

Դպրոցական մոտիվացիան դա ներքին գործընթաց է, որով սովորողները անկախ ցանկություն են ունենում սովորել, բարելավել իրենց գնահատականները, ընդլայնել իրենց գիտելիքները և, ընդհանուր առմամբ, կրթական համատեքստին առնչվող նպատակներ դնել: Սա ակադեմիական լավ արդյունքների կարևորագույն գործոններից մեկն է:

Ուսուցչի գործն ավելի արդյունավետ կլինի, եթե կարողանա արտաքին մոտիվացիա ունեցող աշակերտների մոտ արթնացնել ներքին մոտիվացիա: Դա, իհարկե, բարդ գործընթաց է, բայց կարելի է հասնել դրան:

Կան նաև ընդհանրապես մոտիվացիա չունեցող աշակերտներ, որոնց մոտ բացակայում է հետաքրքրությունը կենսաբանություն առարկայի հանդեպ կամ ունեն ինքնավստահության պակաս: Այս աշակերտների հետ ցանկալի է աշխատել խմբային մեթոդով, ներառել խմբում կամ շարքում, բացահայտել՝ ինչ թեմաներ են նրանց հետաքրքրում, թույլ տալ նրանց օգտագործել իրենց կարողությունները, պետք է նրանց քաջալերել և ոչ մի դեպքում չկիրառել պատժի մեթոդը, ընդհանրապես պետք է խուսափել պատժից, արդյունավետ չէ:

Կան նաև ապամոտիվացված աշակերտներ, որոնց մոտ արտաքին որոշ գործոններ (առողջական, ընտանեկան և այլ խնդիրներ) առաջացնում են հետաքրքրության և աշխատունակության անկում, այսպիսի երեխաներին պետք է արագ հանել ստեղծված իրավիճակից, բացատրել անհասկանալի թեմաները, աշխատել նորից խմբային տարբերակով:

Հինգ հիմնական մոտիվացիոն գործոնները՝

Ուսուցչի էնտուզիազմ և հստակ նպատակներ՝ կապված սովորողների հետ

Ուսուցչի կողմից քաջալերման զգացում աշակերտի մոտ

Աշակերտի մոտ զգացում, որ իսկապես ուսուցիչը հավատում է աշակերտի առաջադիմությանը և հաջողություններին

Աջակցող մթնոլորտի ստեղծում դասավանդողի և սովորողների միջև, համբերատարություն սովորողի նկատմամբ:

Ուսուցչի իրական ներգրավվածություն, դասարանային և խմբային լավ հարաբերություններ:

Դպրոցական մոտիվացիան բարդ հոգեբանական երեւույթ է, և որպես այդպիսին հեշտ չէ մատնանշել այն կառուցող կամ ոչնչացնող մեկ գործոն: Ընդհակառակը, կան բազում պատճառներ, որոնք կարող են հանգեցնել նրան, որ սովորողը կրքոտ լինի իր արածի նկատմամբ, կամ, ընդհակառակը, նա ունի շատ ցածր մոտիվացիա:

Գործոններից մեկը, որն առավելապես ազդում է մոտիվացիայի առկայության վրա, այն զգացողությունն է, որ մենք վերահսկում ենք մեր սեփական նպատակները, դրանց վրա աշխատելու տեմպը և այն ուղղությունը, որով շարժվում ենք: Ցավոք, ավանդական կրթական համատեքստում վերահսկողության այս զգացումը գործնականում գոյություն չունի:

Դպրոցական մոտիվացիայի բացակայության հետևանքները կարող են իսկապես բացասական լինել դրանից տառապող սովորողների համար: Հետեւաբար, վերջին տասնամյակների ընթացքում մոտիվացիայի մասնագետները փորձել են սովորողների մոտ այս հոգեբանական գործոնը արհեստականորեն բարելավելու ուղիներ գտնել:

Ինչպես արդեն տեսանք, չկա որևէ մեկ տարր, որը բացատրում է, թե ինչու սովորողը չունի սովորելու քիչ թե շատ մոտիվացիա: Ուստի հնարավոր չէ գտնել մեկ լուծում, որը վերացնում է այս խնդիրը բոլոր սովորողների համար: Այնուամենայնիվ, գտնվել են որոշ գործիքներ, որոնք կարող են օգնել լուծել այն գոնե մասամբ:

Ուսուցչի համար դպրոցականների ուսուցման մոտիվացիան ուսումնասիրելու ընդհանուր ուղին կարող է լինել հետևյալը.

Դպրոցականների կրթական գործունեության վիճակի վերլուծությունը ներառում է՝ .ուսուցչի գնահատումը կրթական գործունեության օբյեկտիվ վիճակի և դրա բաղադրիչների վերաբերյալ, դպրոցականների առաջընթացի, նրանց վարքագծի, հաճախումների վերլուծությունը , ուսուցչի կողմից հաշվի առնելով սովորողների սուբյեկտիվ գնահատումը իրենց ակադեմիական աշխատանքի վերաբերյալ, սովորողների կարծիքը այն մասին, թե ինչն է իրենց համար ամենադժվարը կրթական աշխատանքում, այն մասին, թե որքան ժամանակ են նրանք ծախսում դասերին և այլն: Ուսուցման գործունեության վերաբերյալ այս բոլոր տվյալները կլինեն անհրաժեշտ ֆոն մոտիվացիայի վերլուծության համար:

Սովորելու իրական մոտիվացիայի վերլուծությունը կարող է ներառել, ուսուցչի կողմից դպրոցում սովորողների տարբեր տեսակի վերաբերմունքի օբյեկտիվ դրսևորումների նույնականացում, դասարանում և դրանցից դուրս երկարաժամկետ դիտարկման ընթացքում, հատուկ կազմակերպված փորձարարական իրավիճակների ընթացքում: Այստեղ հիմնական ուղին է համեմատել աշակերտների իրական գործողությունները առօրյա դպրոցական կյանքի ընթացքում և կրկնվող փորձարարական իրավիճակների պայմաններում: Կարելի է պահել ուսուցչի օրագրերը ՝ ամրագրելով հետաքրքրությունների դրսևորումների հաճախականությունն ու ծանրությունը: Այս օրագրերը կարող են պահվել հետևյալ տեսքով.

Դրդապատճառների տեսակները ՝մոտիվներ, նպատակներ, հույզեր:

Մոտիվացիոն ոլորտի վիճակը շատ ճկուն է, յուրաքանչյուր երեխա ունի մոտիվացիայի զարգացման ռեզերվներ: Հետևաբար, յուրաքանչյուր աշակերտի մոտիվացիայի վիճակի գնահատումը պետք է ենթադրի դրա զարգացման հնարավորությունը: Մոտիվացիան ուսումնասիրելու նպատակը յուրաքանչյուր կոնկրետ աշակերտի մոտ մոտիվացիայի զարգացման հեռանկարների որոշումն է:

Այլ կերպ ասած, յուրաքանչյուր սովորողի ուսուցման մոտիվացիայի ուսումնասիրությունը պետք է իրականացվի ոչ թե առկա, նախկինում հաստատված մոտիվացիայի մակարդակին հարմարվելու համար (չնայած, իհարկե, անհրաժեշտ է հաշվի առնել անցյալի փորձի անհատական բնութագրերը), բայց որպեսզի ձգտենք, գոյություն ունեցող մակարդակների հիման վրա, ձևավորել նոր տիպեր և մոտիվացիայի ձևեր, որոնք անհրաժեշտ են ակտիվ անհատականություն դաստիարակելու համար: Մոտիվացիայի ուսումնասիրությունը ինքնանպատակ չէ, այլ միայն հիմք է հանդիսանում դրա հետագա ձևավորման համար:

Գլուխ 3. Հետազոտական մաս

Արդյո՞ք մոտիվացիան նպաստում է ուսումնական գործընթացի բարձրացմանը: Ենթադրվում է, որ ուսումնական գործընթացի նպատակային կազմակերպումը հանգեցնում է սովորողի հետաքրքրության ավելացմանը և մոտիվացիայի բարձրացմանը: Դրա համար նյութի մատուցման ձևը պետք է լինի ճկուն և հետապնդի ուսուցման հիմնական խնդիրներից մեկը՝ սովորողների գիտելիքների յուրացումը դարձնել տևական, բովանդակալից, իսկ բուն ուսումնառությունը՝ ցանկալի և ուրախություն պատճառի:

Հետազոտության նպատակն է, որ աշակերտի մոտ մոտիվացիան կենսաբանություն առարկայի նկատմամբ աճի և ոչ թե նվազի: Սովորել չցանկացող աշակերտին մոտիվացնելով ներգրավել դասապրոցեսին:

Հետազոտության համար վերցնել 8-րդ դասարանի կենսաբանությունը, քանի որ այդ ուսումնական տարում են աշակերտները ուսումնասիրում կենսաբանություն <<Մարդ>> բաժինը, որը ընդգրկում է մարդու կազմաբանությունը, ֆիզիոլոգիան և հիգիենան:

Աշակերտի մոտիվացիան կենսաբանության նկատմամբ բարձրացնելու համար կարևոր է, որ սովորողը հասկանա, որ յուրաքանչյուր մարդ պետք է իմանա իր մարմնի կառուցվածքը և ինչպես այն պահպանի վնասակար գործոնների ազդեցությունից: Դա անհրաժեշտ է առողջ ապրելակերպի և կյանքի տևողության երկարացման համար:

Սովորողը պետք է գիտակցի, որ իմանալով մարդու կազմաբանությունը, ֆիզիոլոգիան և հիգիենան, կարող է տարբեր իրավիճակներում օգնել մարդկանց, որոնք օգնության կարիք ունեն:

Առաջին բուժօգնությունը կարող է լինել տարբեր իրավիճակներում՝ արյունահոսությունների, ջրահեղձության, շնչահեղձության, էլեկտրահարության, այրվածքների, ոսկրերի կոտրվածքների դեպքում:

Դասերի պրոցեսին դիտվող տեսահոլովակները, գործնական և խմբային աշխատանքները, համագործակցային մեթոդների կիրառումը լրացնում են հետաքրքրությունը ուսուցման նկատմամբ և բերում աշակերտների ներգրավվածությանը և մոտիվացիայի աճին:

Դաս 1

<<Առաջին օգնությունը կապանների ձգման, հոդախախտման և կոտրվածքների դեպքում>> :

Դասի նպատակն է, որ աշակերտը իմանա ոսկրերի վնասվածքները և կարողանա ցուցաբերել բուժօգնություն տուժածին և գիտակցի նախնական բժշկական օգնության կարևորությունը:

Աշակերտները դիտում են տեսահոլովակը ոսկրերի վնասվածքների մասին, հետո բացատրել դասը: Դասարանը բաժանել խմբերի և յուրաքանչյուր խմբի տալ քարտ-առաջադրանքներ, անհրաժեշտ պարագաներ: Խմբերը պետք է պատասխանեն հարցերին և առաջին բժշկական օգնության մասին իրենց ձեռք բերած գիտելիքները գործնականում կիրառեն տիկնիկների վրա:

Քարտ-առաջադրանքների նմուշ օրինակներ.

Կողոսկրերի կոտրվածք՝ ինչ պետք է անել: Հիմնավորել:

Սրունքի ոսկրերի բաց կոտրվածք՝ ինչ պետք է անել: Հիմնավորել:

Ողնաշարի, գանգի կոտրվածք՝ ինչ պետք է անել: Հիմնավորել:

Հոդախախտում՝ ինչ պետք է անել: Հիմնավորել:

Այնուհետև առաջադրել թեստեր, որտեղ խմբերը պետք է գրեն գործողությունների ճիշտ հաջորդականությունը:

Ինչ հաջորդականությամբ պետք է ցույց տալ բժշկական օգնություն հոդախախտման ժամանակ:

Ա. Տուժածին տանել բժշկի

Բ. Անշարժացնել վերջույթը

Գ. Վնասված մասի վրա սառը թրջոց դնել

Դ. Վնասված հոդը ամուր փաթաթել:

Գրել գործողությունների հերթականությունը արմունկների կոտրվածքների ժամանակ:

Ա. Դնել բեկակալ

Բ. Տուժածին տանել բժշկի

Գ. Վերջույթը փաթաթել փափուկ կտորով

Դ. Վերջույթը ամուր փաթաթել բեկակալով։

Դասապրոցեսի ավարտին աշակերտները մեծ ոգևորությամբ քննարկեցին իրենց ստացած գիտելիքները։ Նրանց մոտ մեկ անգամ ևս ամրապնդվեց այն տեսակետը, թե որքան կարևոր է կենսաբանություն առարկայի իմացությունը, որը աշակերտին հնարավորություն կտա օգնել մարդկանց, որոնք դրա կարիքն ունեն։

ԴԱՍ 2

Վիտամիններ

Դասի նպատակն է, աշակերտը իմանա, որ վիտամինները կենսաբանական ակտիվ նյութեր են, նրանց տեսակները,վիտամիններով հարուստ սննդամթերքները և տարբեր սննդանյութերի օգտագործումը որպես առողջության երաշխիք։

Դիտել տեսահոլովակը վիտամինների մասին,հետո բացատրել դասը և պատմել ռուս բժիշկ Ն.Ի.Լունինի կատարած աշխատանքը։ 1880 թվականին Լունինը փորձ կատարեց երկու խումբ մկների վրա։Մի խմբին կերեկրեց բնական կաթով,մյուսին՝ արհեստական խառնուրդով,որի մեջ կային սպիտակուցներ,ճարպեր,ածխաջրեր,հանքային աղեր այն նույն հարաբերությամբ ինչը որ կար բնական կաթի մեջ։ Բայց նրան շատ զարմացրեց փորձի արդյունքները, մկները, որոնք ստացել էին արհեստական խառնուրդ, սատկեցին, իսկ որոնք ստացել էին բնական կաթ, շատ լավ էին իրենց զգում։

Հարց դասարանին.Ինչպես կարելի է բացատրել Լունինի կատարած փորձի արդյունքները։ Ինչու սատկեցին մկները։ Լսել աշակերտների պատասխանները։ Գոյություն ունեն ինչ-որ նյութեր, որոնք, չկային արհեստական կաթի մեջ։ Այդ պատճառով էլ մկները սատկեսին։

Հետո դասարանը բաժանել խմբերի։ Առաջին և երկրորդ խմբերը կարդում և լրացնում են համապատասխան աղյուսակները,իսկ երրորդ խումբը պատասխանում է հարցերին։

Առաջին խումբ՝

Վիտամինների անվանումը	Դերը նյութափոխանակության գործընթացում	Վիտամիններով հարուստ սննդամթերք

Երկրորդ խումբ՝

Վիտամինեի անվանումը	Անբավարարության հետևանքով առաջացած հիվանդությունը և ախտանշանները

Երրորդ խումբ՝

Հարցեր՝

1.Կարո՞ղ է արդյոք մի վիտամինի պակասը լրացվել մեկ այլ վիտամինով:

2.Ինչու՞ վիտամինները չի կարելի համարել սննդանյութ:

3.Ինչպե՞ս պահպանել և մշակել սննդամթերքը,որ վիտամինները չքայքայվեն:

Աշակերտները դասապրոցեսի ավարտին միմյանց հետ քննարկեցին վիտամինների կարևորության մասին:Նրանց համար շատ հետաքրքիր էր ստացված տեղեկությունները և խոստացան վերանայել սեփական սննդակազմը:Նրանց մոտ մեկ անգամ ևս ամրապնդվեց կենսաբանության իմացության կարևորությունը:

Առողջության պահպանումը պահանջում է գիտելիքներ: Մարդու անատոմիայի, ֆիզիոլոգիայի և հիգիենայի իմացությունը կօգնի առողջապահական, աճող սերնդի

ֆիզիկական դաստիարակման, սպորտի և ֆիզիկական աշխատանքի ճիշտ կազմակերպմանը, հնարավորություն կտա տիրապետել օրգանիզմին, կոփել, մարզել և ապրել առողջ կենսակերպով:

Եվ ինչպես Շոպենհաուերն է ասում. Առողջությունը դեռ ամեն ինչ չէ,սակայն ամեն ինչը ոչինչ է ,եթե չկա առողջություն:

Եզրակացություն

Յուրաքանչյուրս մեր կյանքում ունենալով նպատակներ շարժվում ենք առաջ: Ոմանք հանձնվում են, իսկ ոմանք հասնում իրենց նպատակներին: Դեպի նպատակները սլացող անձանց միշտ էլ հարկավոր է մոտիվացիա՝ ավելի համառ և նպատակասլաց շարժվելու համար:

Սովորողները բնութագրվում են ճանաչողական գործունեության և մոտիվացիայի միջին մակարդակով:

Մոտիվացիայի կայուն մակարդակի առաջացումը նպաստում է սովորողին հասնել հաջողության և հաղթահարել դժվարությունները և խոչընդոտները: Այդ գործում մեծ է ուսուցչի դերը: Ուսուցիչը պետք է ամրապնդի սովորողի վստահությունը իր ունակությունների նկատմամբ:

Ուսումնական գործընթացի նպատակային կազմակերպումը հանգեցնում է սովորողների մոտ ուսումնական մոտիվացիայի բարձրացմանը: Կարևոր է համագործակցային մեթոդների կիրառումը,քանի որ այն բերում է սովորողների ներգրավվածության,մոտիվացիայի աճի և ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Մոտիվացիայի բարձրացման համար դպրոցում պետք է ստեղծվեն պայմաններ,որպեսզի սովորողը սիրով հաճախի դպրոց և նրա մոտ հետաքրքրություն առաջանա ուսման նկատմամբ: Դրա հիմնական կատարողը ուսուցիչն է,որը պետք է կիրառի տարբեր մեթոդներ,որոնց շնորհիվ սովորողը դառնա դասապրոցեսի անմիջական մասնակիցը:

Ուսումնական գործընթացի նպատակային կազմակերպումը հանգեցնում է ուսումնական մոտիվացիայի բարձրացմանը:

Ներքին մոտիվացիան բարձրացնելու համար աշակերտը պետք է սիրով կատարի իրեն հանձնարարված աշխատանքը:

Մոտիվացիան բարձրացնելու համար շատ կարևոր է.

1.Խրախուսել աշակերտներին և ապահովել բոլորի ներգրավվածությունը դասին:

2.Կիրառել խմբային աշխատանք և գնահատել խմբի անդամների միջև փոխհարաբերությունները:

3.Տալ աշակերտներին ինքնավարություն,ինքնուրույն որոշում կայացնելու հնարավորություն:

4.Փոխել դասավանդման մեթոդները,կիրառել նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ:

5.Աշակերտների գիտելիքները հարստացնելու համար միշտ ստեղծել միջառարկայական կապեր:

6.Դիդակտիկ նյութերի առկայություն,որը ավելի է խթանում հետաքրքրությունը առարկայի նկատմամբ:

Գրականություն

1. Боронова Г. Х., Прусова Н. В. Психология труда. Конспект лекций. М.: 2008

2. Григорович Л.А., Марцинковская Т. Д. Педагогика и психология: Учеб. пособие. — М.: Гардарики, 2003

3. Леонтьев А.Н. Потребности, мотивы и эмоции. М.: Изд-во Моск.Ун-та, 1971

4. http://194school.org/2021/11/how-to-motivate-learners/

5. Պավլենոկ, Պ. Դ. Սոցիոլոգիա

6. Ռայգորոդսկի, Դ. Յա. Գործնական հոգեախտորոշում։—Սամառա։ Երիտասարդություն 2000թթ

7.Ա.Նալչաջյան. Ընդհանուր հոգեբանության հիմունքներ, Երևան, 1991

8. Зоткин Н. В. Серебрякова М. Е. Общая психология. Психология мотивации и эмоций, Россия, 2007

Հավելված 1՝

Դասի պլան

Ամսաթիվ՝

Ուսուցչի ազգանուն, անուն- Առարկա- Մարկոսյան Իվետա-Կենսաբանություն

Դասի թեման- Առաջին օգնությունը կապանների ձգման,հոդախախտումների և ոսկրերի կոտրվածքների դեպքում

	Դասի նպատակը	*Կարևոր դրույթները* Ի՞նչ գիտելիքներ և հմտություններ են մտնում դասի նպատակի մեջ:	*Անհրաժեշտ նյութերը* Ի՞նչ է անհրաժեշտ դասի համար-դիդակտիկ պարագան
Դասի Տեսլա կանը			

	Ձևավորել գիտելիքներ ոսկրերի վնասվածքների տեսակների, Կապանների ձգման Հոդախախտման մասին Վերջնարդյունքները՝ Սովորողը կարողանա՝ Բնութագրել և տարբերակել վերջույթների,կողոսկրերի,ողնաշարի,գանգի վնասվածքները Ցուցաբերել նախաբժշկական առաջին օգնությունը կոտրվածքների, կապանների ձգման և հոդախախտման ժամանակ Գնահատել առաջին նախնական բժշկական օգնություն ցուցաբերելու արագ և ճիշտ կողմնորոշվելու կարևորությունը	Հոդակապանների պրկում,հոդախախտում,բաց կոտրվածք, բեկակալ, կողոսկրերի և ողնաշարի կոտրվածքներ, գանգի վնասվածք	Մարդու կմախքի մոդել,համապատասխան ցուցապաստառներ,անհրաժեշտ նյութեր ոսկրային վնասվածքների ժամանակ՝ոսկրերի ամրացման տախտակներ,վիրակապելու նյութեր,տիկնիկներ,տեսահոլովակ
Դասի ընթացքը, մեթոդները	**Գնահատում** Նկարագրեք ինչպես պետք է չափեք մասնակիցների առաջընթացը կամ դասի նպատակի իրականացումը: Կցեք ամենօրյա գնահատումը, որը պետք է լինի համաձայնեցված, հավակնոտ, չափելի և իրատեսական:.		
	Հարց ու պատասխան,գործնական աշխատանք		
	Դասի սկիզբ -5ր Ի՞նչ են սովորելու աշակերտները: Ինչու՞ է դա կարևոր: Ինչպե՞ս է դա կապվում նրանց նախկին գիտելիքների հետ: Ինչպե՞ս են սովորելու: Կատար՛ր հիմա… Խթանիչ վարժություն, եթե կա:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը

	Կազմակերպչական աշխատանքների իրականացում,անդրադարձ նախորդ դասի հանձնարարականներին կատարելով ուղղորդված հարցում	Մասնակցում են քննարկմանը, կմախքի վրա ցույց են տալիս ոսկորները, պատասխանում են առաջադրված հարցերին և նախապատրաստվում նոր նյութի յուրացմանը :	Կատարում է հարցադրումներ, հետևում է դասի ընթացքին, ուղղորդող հարցեր է տալիս ոսկրերի վնասվածքների վերաբերյալ:
	Նոր նյութի ներկայացում -10ր Ի՞նչ են սովորում աշակերտները : Ինչպե՞ս են սովորում այդ նյութը: Արդյո՞ք այս ինֆորմացիան բխում է կարևոր դրույթներից:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Դիտում են տեսահոլովակը, Ներկայացնում է նոր դասի բովանդակությունը օգտագործելով հիմնական հասկացությունները	Պատասխանում են հարցերին,մասնակցում են քննարկումներին, տալիս են հետադարձ կապ	Կատարում է հարցադրումներ ոսկրերի կոտրվածքների, կապանների ձգման,հոդախախտման վերաբերյալ, օգտագործելով ցուցապաստառի նկարները:
	Ուղղորդված աշխատանք -20ր Արդյո՞ք բազմակի հնարավորություն է տրվում աշակերտներին աշխատելու, օգտագործելու ներկայացված նոր նյութի գիտելիք/հմտությունը: Արդյո՞ք վարժությունները դասավորված են հեշտից դժվար: Արդյո՞ք այդ աշխատանքը վերահսկվումէ, եւ աշակերտներին տրվում աջակցություն կամ ուղղորդումկարեւոր դրույթները յուրացնելու համար : Ինչպես եք կազմակերպելու ընկալման ստուգումները: Ինչ եղանակով եք անդրադառնալու սխալներին:Արդյո՞ք ներկայացված նոր նյութը նախապատրաստել է աշակերտներինինքնուրույն աշխատելու: Արդյո՞ք կա դասը լսելու, մասնակցելու եւ համագործակցելուհստակ ձեւակերպված սպասելիքներ:		

	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Դասարանը բաժանում է խմբերի Ներկայացնում է խմբային աշխատանքի կանոնները,մեկնաբանում է առաջադրանքները Տալիս է գործնական աշխատանք և համապատասխան հրահանգներ Հետևում և ուղղորդում է աշակերտներին այդ ընթացքում	Բաժանվում են խմբերի և կատարում ուսուցչի տված առաջադրանքները Յուրաքանչյուր խմբի տրվում է քարտ-առաջադրանք,լրացնում են բաց թողնված բառերը	ՈՒղղորդում է,ստուգում է,տալիս է հրահանգներ,մեկնաբանում է, ցուցադրում կմախքի վրա
	Ինքնուրույն աշխատանք -5ր Ինչպե՞ս է ուսուցիչը հնարավորություն տալիս աշակերտներին ինքնուրույն աշխատելու, կիրառելուստացած գիտելիքները : Արդյո՞ք ինքնուրույն աշխատանքում ընդգրկված է նպատակին տանող բոլոր գիտելիք/ հմտությունները: Ինչպես են կազմակերպվելու շտկումները:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Տալիս է հրահանգներ և մեկնաբանում առաջադրանքը	Ձեռք բերած գիտելիքները գործնականում կիրառում են տիկնիկների վրա	Վերահսկում է աշխատանքը
	Դասի ավարտ -5ր		

	Ինչպես են աշակերտները ամփոփում եւ ներկայացնում իրենց յուրացրած նյութի կարեւորությունը։Ինչպե՞ս է երեւում, որ աշակերտները յուրացրել են հիմնական դրույթները եւ հասել դասի նպատակին։ Ինչո՞ւ/ինչպես են աշակերտները ընդգրկված լինելու։	
	Ի՞նչ մենք այսօր սովորեցինք։Կատարում է հարցադրումներ օգտագործելով հիմնական հասկացությունները : Աշակերտները պատասխանում են հարցերին։	
	Տնային աշխատանք, եթե նախատեսվում է։ Տանը պատրաստել բեկակալ,վարժվել այն կիրառելու գործում,որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանա ճիշտ և արագ կողմնորոշվել։	
	Վերլուծություն/անդրադարձ(լրացվում է դասից հետո)։	

Հավելված 2՝

Դասի պլան

Ամսաթիվ՝

Ուսուցչի ազգանուն, անուն-Մարկոսյան Իվետա Առարկա- Կենսաբանություն

Դասի թեման- Վիտամիններ

	Դասի նպատակը		
Դասի տեսլակ անը		*Կարևոր դրույթները* Ի՞նչ գիտելիքներ և հմտություններ են մտնում դասի նպատակի մեջ:	*Անհրաժեշտ նյութերը* Ի՞նչ է անհրաժեշտ դասի համար-դիդակտիկ պարագաներ:

	Ձևավորել գիտելիքներ .վիտամինները որպես կենսաբանորեն ակտիվ նյութերի, վիտամինների տեսակների մասին .սննդանյութեր ,որոնք հարուստ են վիտամիններով **Վերջնարդյունքները** Սովորողը կկարողանա Պարզաբանել գերվիտամինոզ և թերվիտամինոզ հասկացությունները, Նկարագրել վիտամինների դերը,վիտամինների չափավոր մուտքը օրգանիզմ որպես բնականոն նյութափոխականության գրավական Հասկանա թարմ և վիտամիններով հարուստ սննդամթերքի օգտագործման անհրաժեշտությունը	Ավիտամինոզ,թերվիտամինոզ,գերվիտամինոզ,հավկուրություն,բերի-բերի,ռախիտ,ցինգա,սննդակարգ,օրվա սննդաբաժին	Տեսաֆիլմ,սննդամթերք պատկերող պաստառներ,թեստ,աղյուսակներ
	Գնահատում Նկարագրեք ինչպես պետք է չափեք մասնակիցների առաջընթացը կամ դասի նպատակի իրականացումը: Կցեք ամենօրյա գնահատումը, որը պետք է լինի համաձայնեցված, հավակնոտ, չափելի և իրատեսական:.		
	Հարցադրումներ,գործնական աշխատանք,ինքնուրույն աշխատանք		

	Դասի սկիզբ -5ր. Ի՞նչ են սովորելու աշակերտները: Ինչու՞ է դա կարևոր: Ինչպե՞ս է դա կապվում նրանց նախկին գիտելիքների հետ: Ինչպե՞ս են սովորելու: Կատար՛ր հիմա… Խթանիչ վարժություն, եթե կա:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Կազմակերպչական աշխատանքների իրականացում, մտագրոհով վերհիշել նախորդ դասը,կատարել ուղղորդված աշխատանք	Մասնակցում են քննարկմանը,պատասխանում են առաջադրված հարցերին,գրատախտակին լրացնում են բաց թողնված բառերը	Հետևում է դասի ընթացքին,կատարում է հարցադրումներ,տալիս է ուղղորդող հարցեր վիտամինների վերաբերյալ
	Նոր նյութի ներկայացում -10ր. Ի՞նչ են սովորում աշակերտները : Ինչպե՞ս են սովորում այդ նյութը: Արդյո՞ք այս ինֆորմացիան բխում է կարևոր դրույթներից:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը

	Դիտում են տեսահոլովակը Ներկայացնում է նոր դասը պատմելով ռուս գիտնական Ն.Ի.Լունինի փորձը երկու խումբ մկների վրա Նոր դասի բովանդակությունը պատմելիս օգտագործում է հիմնական հասկացությունները	Պատասխանում են հարցերին,մասնակցում են քննարկումներին,տալիս են հետադարձ կապ	Կատարում է հարցադրումներ.ինչ պե՞ս կարելի է բացատրել Լունինի կատարած փորձի արդյունքները, Ի՞նչ է ավիտամինոզ,թերվիտամինոզ, գերվիտամինոզ,ցուցապաստառի վրա ցույց տալ վիտամիններով հարուստ սննդամթերքներ
	Ուղղորդված աշխատանք -20ր. Արդյո՞ք բազմակի հնարավորություն է տրվում աշակերտներին աշխատելու, օգտագործելու ներկայացված նոր նյութի գիտելիք/հմտությունը: Արդյո՞ք վարժությունները դասավորված են հեշտից դժվար: Արդյո՞ք այդ աշխատանքը վերահսկվումէ, եւ աշակերտներին տրվում աջակցություն կամ ուղղորդումկարեւոր դրույթները յուրացնելու համար : Ինչպես եք կազմակերպելու ընկալման ստուգումները: Ինչ եղանակով եք անդրադառնալու սխալներին:Արդյո՞ք ներկայացված նոր նյութը նախապատրաստել է աշակերտներին ինքնուրույն աշխատելու : Արդյո՞ք կա դասը լսելու, մասնակցելու եւ համագործակցելուհստակ ձեւակերպված սպասելիքներ:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը

	Դասարանը բաժանում է երեք խմբի Բացատրում է խմբային աշխատանքի կանոնները Առաջին և երկրորդ խումբը կարդում և լրացնում է տրված աղյուսակները,իսկ երրորդ խումբը պատասխանում է տրված հարցերին Այդ ընթացքում ուսուցչուհին հետևում և ուղղորդում է աշակերտներին	Բաժանվում են խմբերի կատարում ուսուցչի տված առաջադրանքը Լրացնում են աղյուսակները,պատասխանում են տրված հարցերին	ՈՒղղորդում է,ստուգում է, և տալիս է համապատասխան հրահանգներ
	Ինքնուրույն աշխատանք -5ր. Ինչպե՞ս է ուսուցիչը հնարավորություն տալիս աշակերտներին ինքնուրույն աշխատելու, կիրառելուստացած գիտելիքները : Արդյո՞ք ինքնուրույն աշխատանքում ընդգրկված է նպատակին տանող բոլոր գիտելիք/ հմտությունները: Ինչպես են կազմակերպվելու շտկումները:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Տալիս է թեստային առաջադրանք. Ընտրել ճիշտ պատասխանը	Լրացնում են առաջադրված թեստերը	Վերահսկում է աշխատանքը
	Դասի ավարտ -5ր.		

	Ինչպես են աշակերտները ամփոփում եւ ներկայացնում իրենց յուրացրած նյութի կարեւորությունը։Ինչպե՞ս է երեւում, որ աշակերտները յուրացրել են հիմնական դրույթները եւ հասել դասի նպատակին։ Ինչո՞ւ/ինչպես են աշակերտները ընդգրկված լինելու։	
	Այսօր ի՞նչ սովորեցինք։Տալիս է հարցեր կիրառելով հինմական հասկացությունները Աշակերտները պատասխանում են հարցերին։	
	Տնային աշխատանք։ Օգտվելով տարբեր աղբյուրներից կազմել և ներկայացնել վիտամինները բնութագրող ցուցապաստառ՝ ներկայացված պլանի համաձայն. 1.Հայտնաբերման պատմությունը։ 2.Գերվիտամինոզ և թերվիտամինոզ 3.Սննդամթերքում վիտամինների պահպանման կանոնները։ Պատասխանները կփակցվեն դասարանում ամբողջ տարվա ընթացքում։	
	Վերլուծություն/անդրադարձ(լրացվում է դասից հետո)։	